ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ՔԱՂՎԱԾՔ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ

2020թ. ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Ընդդեմ Hayeli.am կայքի՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արթուր Հովհաննիսյանի դիմումի վերաբերյալ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին էր դիմել ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արթուր Հովհաննիսյանն՝ ընդդեմ Hayeli.am կայքում 2019թ. նոյեմբերի 23-ին հրապարակված «Վոյաժներ, վոյաժներ... Կյանքն ուրախ, ապրուստը՝ ձրի» հոդվածի (հեղինակ՝ Անի Սահակյան):

Ըստ բողոքի՝ հրապարակման բովանդակությունը չի համապատասխանում նյութի վերնագրին, քանի որ միջազգային վերապատրաստման ծրագրի մասնակցելու համար իրեն և ԱԺ պատգամավոր Վահագն Թևոսյանին պետբյուջեից ֆինանսավորում չի հատկացվել: Վերջինս հայտնել էր նաև, որ հերքման պահանջով դիմել է Hayeli.am կայք-ին, որը, սակայն, այն չի բավարարվել:

2019թ. նոյեմբերի 30-ին Hayeli.am կայքը որոշակի փոփոխություններով, այնուամենայնիվ հրապարակել է պատգամավորների պարզաբանումը:

ԱԺ պատգամավորը ԴՄ-ին տեղեկացրեց, որ պատասխանը թեև փոփոխություններով է տպագրվել, սակայն իրենք այլևս նպատակահարմար չեն գտնում քննարկում անել հրապարկման կապակցությամբ:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը տեղեկությունն ընդունեց ի գիտություն:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2020թ. հունվարի 17-ի նիստը կայացել է հետևյալ կազմով՝

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արա ՇԻՐԻՆՅԱՆ, Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 47-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: